ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	ԱՐԹԻԿ
ՄԱՐԶ	ՇԻՐԱԿ

1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Արթիկը Հայաստանի հնագույն բնակավայրերից է, Շիրակի մարզի մեծությամբ երկրորդ քաղաքը: Քաղաքի տարածքում և նրա շրջակայքում պահպանված բազմաթիվ և բազմատեսակ մշակույթի հուշարձանները , եկեղեցիները վկայում են քաղաքի հին պատմություն ունենալու մասին: Միջնադարյան ճարտարապետության մեծ արժեք է քաղաքի կենտրոնում գտնվող Ս. Աստվածածին եկեղեցին , որը հիմա կիսավեր է: Քաղաքի հարավային լանջին է գտնվում Լմբատավանքը, որը VII դարի կառույց է:

Շիրակի մարզի Արթիկ քաղաքը հնում մտնում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շիրակի գավառի մեջ: Պարսկաստանի տիրապետության վերջին շրջանում եղել է Երևանի խանության կազմի մեջ:

Նախախորհրդային Արթիկն անբարեկարգ բնակավայր էր: Անցած 90 տարիների ընթացքում ամբողջապես փոխվեց Արթիկի դիմագիծը: Կառուցվեցին գործարաններ, դպրոցներ, մշակույթի և հանգստի օջախներ: 1930 թվականին կազմավորվեց Արթիկի վարչատարածքային միավոր՝ Արթիկի շրջանը: Արթիկը քաղաքը դարձավ շրջկենտրոն: Արթիկը քաղաքի կարգավիճակ է ստացել 1945 թվականին, քաղաքի զարգացմանը մեծապես նպաստեց նաև քաղաքի և նրա շրջակայքում գտնվող տարբեր տեսակի տուֆ քարի պաշարները, որոնց արդյունահանման համար ստեղծվեցին բազմաթիվ տուֆ քարի հանքեր, կառուցվեց Լենինական – Արթիկ – Պեմզաշեն երկաթուղին:

Ներկայումս Արթիկը քաղաքային առանձին համայնք է՝ մարզի և հանրապետության մյուս քաղաքների հետ սերտ կապերով և դինամիկ զարգացմամբ:

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Արթիկը գտնվում է Արագած լեռան հյուսիս – արևմտյան լանջերին, Շիրակի դաշտավայրի հարավային մասում: Քաղաքի տարածքը գտնվում է մթնոլորտային ցուրտ գոտում: Կլիման բարեխառն է՝ տաք ամառ, ցուրտ ձմեռ: Ձմեռը տևական է, (100 – 120 օր), ձյունածածկի կայուն շերտով: Տարեկան տեղումների քանակը 500 – 800 մմ (առավելագույնը մայիս ամսին): Քաղաքի շրջակայքում գերակշռում են լեռնատափաստանային և ալպյան մարգագետինները: Շրջակա տարածքները հիմնականում անտառազուրկ են: Տիրապետող են հյուսիս – արևելյան և արևելյան քամիները: Քաղաքի վարչական տարածքի ընդերքը հարուստ է տուֆ քարի տարբեր տեսակներով, որի հանքերը շատ են քաղաքի շրջակայքում:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	500-800մմ
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (^{0}C)	-4ºC, -6ºC
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (^{0}C)	20ºC-30ºC

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից 1.1) 1.2) 1.3)	–
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Արթիկի շրջան

3. Համայնքի հեռավորությունը՝		
3.1) մայրաքաղաքից (կմ)	106 կմ	
3.2) մարզկենտրոնից (կմ)	27 կմ	
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)		
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	0	
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	12	
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	0	
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1775 մ	
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	3750	73հա
6. Սահմանակից համայնքների անվանումները	Հառիճ, Անուշավան, Նոր Կյանք, Պեմզաշեն	
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	artik.shirak@mta.gov.am	
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	www.artik.am	
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	093207070 077207070	
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	024452021	
11. Համայնքի հեռախոսային կոդը	0244	
12. Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո	
13.Համայնքապետարանի փոստային դասիչը	3001	
14.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո	
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ	

5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	20278
2. Գրանցված ծնունդների քանակը	171
2.Մահացության դեպքերի քանակը	141
3.Ամուսնությունների քանակը	77
4. Ամուսնալուծությունների քանակը	13
5. Տնային տնտեսությունների թիվը	5200
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	925/836
7. Կենսաթոշակառուների քանակը	3243
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	1166

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	1
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	5
5. Հանրակրթական դպրոցների քանակը	7
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	-

7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	2
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	-
9. Մարզադպրոցների քանակը	3

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	463, 700
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	204
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	2850

8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	3750, 73
2.Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	1973, 29
3.Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	857, 53
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1559
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	148
7. Խոզերի գլուխաքանակը	599
8. Գյուղատնտեսական տեխնիկա	
8.1 տրակտորներ (քանակը)	1
8.2 կոմբայններ (քանակը)	
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	2310

9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	42,5
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	2
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	2
6.2 Էքսկավատորների քանակը	1
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	2
6.4 Գրեյդերների քանակը	1
6.5 քանակը	
6.6 Աղբատար մեքենաների քանակը	4
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	2
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	-
6.9 Ավտոաշտարակների քանակը	2
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	9,35
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի	այո, 5

առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1.Ընդամենը եկամուտներ	510480,8	506406,4
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	87868,5	85626,4
2.1 հողի հարկ	4000,0	4033,3
2.2 գույքահարկ	65400,0	62348,6
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	351307,1	351307,1
3.1 դոտացիա	351307,1	351307,1
3.2 սուբվենցիա	0	0
4. Մուտքեր հողի օտարումից	2000,0	1344,6

Համայնքի վարչական բյուջերի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1. Ընդամենը ծախսեր	510480,8	483153,0

Համայնքի ֆոնդային բյուջերի եկամուտները (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	31538,8	38668,8

Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1. Ընդամենը ծախսեր	38668,8	27379,5

11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	42 31
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	89208,0
3. Ավագանու անդամների թվաքանակը	14

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	**Ակնկալվող լուծումը**
Կոմիտաս թաղամասի կոյուղագծի կառուցում	ՀՀ կառավարության սուբվենցիոն ծրագրերով
Շինարարների փողոցի վերանորոգում և ասֆալտապատում	ՀՀ կառավարության սուբվենցիոն ծրագրերով
Սպանդարյան փողոցի վերանորոգում և ասֆալտապատում	ՀՀ կառավարության սուբվենցիոն ծրագրերով

Բազմաբնակարան բնակելի շենքերի կտուրների վերանորոգում	ՀՀ կառավարության սուբվենցիոն ծրագրերով
Գր. Լուսավորիչ փողոցի վերանորոգում և ասֆալտապատում	ՀՀ կառավարության սուբվենցիոն ծրագրերով
Մարզադաշտի վերանորոգում	ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի օժանդակությամբ
Մանկապարտեզների շենքերի վերանորոգում	ՀՀ կառավարության օժանդակությամբ
Սպանդանոցի կառուցում	ՀՀ կառավարության և մասնավոր ներդրումների միջոցով